

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻՂԱՅԻԹԻ ԻՇԽԱՆ ԱԽԱՆԸ

(Л. Меликсетъ-Бековъ Тиф. Лист. 1915 № 107.)

Մարտի 24—25 թուրքաց երկրում տեղի ունեցած երկօրեայ կռուից յետոյ, մեր զօրքերը, Խ. գնդի կապիտան Վ. ի հրամանատարութեամբ գրաւեցին թուրքական Իսխան աւանը:

Այս աւանը գտնուում է Էրզրումի վիլայէթում մեր սահմանից 20 վերստ հեռաւորութեան վերայ և Ճորոխ գետից 10 վերստ դէպի արեւելք վերջինիս աջ ափին, բարձրաւանդակ, լեռնային և բաւական զեղեցիկ վայրում:

Կապիտան Վ. ի տեղեկութեան համեմատ, խաղաղ ժամանակ այս աւանում կենում էին միայն թուրքեր մօտ 150—200 ընտանիք և կար մի բաւալիոն զինուոր երկու թնդանօթներով և զընտակացիւրներով. այստեղ կար և հեռագրատուն: Սակայն երբ մեր զօրքերը այդ աւանը մտան, այնտեղ միայն 10 հոգի թուրք էին մնացել, մնացածները թուրք զօրքերի հետ հեռացել էին:

Մտնելով Իշխան մեր զօրքերը սքանչացած մնացին զարմանալի տեսարանով.—նրանց առաջ հանդիսացաւ հայ-վրացական ճարտարապետութեամբ մի հին հոյակապ տաճար վրացերէն եկեղեցական այր բնով արձանագրութիւններով:

Կամենալով դէպքից օգտուել կապիտան Վ., չնայելով բոլոր արգելքներին ու փորձութիւններին հաղուադէպ տառնարիւնութեամբ ձեռնարկեց հնախօսական հետազօտութեան, չափեց տաճարը, ամբիւստիոյ նկարեց մի հետաքրքիր, ի դէպ ասել, նրա համար բոլորովին անհասկանալի վրացերէն մի արձանագրութիւն, որ գտնուում էր տաճարի հարաւային դռան վերայ, հաւաքեց տաճարի արտաքին նկարագրութեան համար ինչ ինչ նիւթեր, և ի լրումն այս ամենի՝ դիմեց Թիֆլիզ խնդրելով հաղորդել իրան իւր հետազօտած հին յիշատակարանների մասին պատմական տեղեկութիւններ:

Իշխան աւանը, յիշաւի արժանի է լուրջ ուշադրութեան յատկապէս նրա համար, որ գտնուում է այն միջավայրում, ուր, մինչև թուրքաց տիրապետութիւնը, հիւսւում էին շահերը երեք ազգութիւնների.—հայերի, յոյների և վրացիների: Ահա թէ ինչու մենք աւելորդ չենք համարում նրա մասին մի քանի խօսք ասել:

Այս աւանի մասին Վրաստանի արքայ պատմաբան աշխարհագիր Վախուշտը, որ վախճանուել է 1772 թուին, իւր, «Վրաստանի աշխարհագրութեան, մէջ» (տես Մ. Դ. Ջաւաշվիլի-ի թարգ. Թիֆ. 1904 թ. հր. 178) ասում է հետեւելը. «Ճորոխ թափուղ գետակի վերայ (որ հոսում է Թորթում—Սպերեան լեռներից) Իշխանում կան շատ ամուր, հսկայական ամրոց և հոյակապ ու գմբէթով մեծ եկեղեցի: Այստեղ էր Սպերը, Թորթումը, և մինչև Տրապիզոնի լեռները, Բայբուրդը հովուող հայսկոպոսի աթոռը, որ այժմ թափուր է այդ»:

Իշխանի տաճարը—մէկն է հայ-վրացական ճարտարապետութեան հնագոյն կերտումաճքներից: Հիմնուելով սուրբ Գրիգոր Հանձինթացու վրացերէն «Վարքին», որ հրատարակել է Н. д. Марр-ը («Тексты и разыскания по армяно-грузинской филологии», кн. VII, Петрогр. 1911 г. стр. 107), սկզբում կառուցուեց Ներսէս կաթուղիկոսից, այսինքն Ներսէս Դ.* շինողից (640—641), որը ընդհանրապէս յայտնի էր իւր համակրութեամբը դէպ ի քաղկեդոնականները: Նշանակում է, է. դարում տաճարը հայոց, իսկապէս ասելով՝ հայ քաղկեդոնականների ձեռքին էր: Այս հանգամանքին անպայման համաձայն են և հայ աղբիւրները (հմտ. Հ. Ղ. Ինճիճեան «Ստորագրութիւն հնութեանց Հայաստանի» Վենետիկ, 1822 թ. հր. 373):

Յետոյ, Թ. դարում, Իշխանում տեանում ենք վրաց վանք՝ հիմնուած առաջին հայ տաճարի աւերակների վերայ Հանձինթի և շատերեզի հիմնագիր սբ. Գրիգոր Հանձինթացու († 861 թ.) աշակերտ և եղբորորդի երանելի Սավա Սարանից: Հէնց այն ժամանակ սոյն այս Սավա Սարանը յիշեալ «Վարքի» խօսքերով (տես մէջ բեր. տեղը) «դարձաւ Իշխանում հայսկոպոս» և յատկապէս «աւագ եկեղեցում և նրա աթոռի վերայ (այս ինքն Իշխանի) որը երկար ժամանակ թափուր էր»:

1006 թ. Գուրգէն թագաւորը Իշխանում գաւիթ շինեց. 1032 թուին Մատթէոս արքեպիսկոպոսը Բագրատ կիւրապաղատի թոյլտուութեամբ նորոգեց հայսկոպոսանիստ տաճարը. իսկ էլ առաջ յատկապէս Գէորգ Ա.-ի (1014—1027 թուերին) Իշխանի հայսկոպոս Անտոնը նորոգեց այդ տաճարի գաւիթը:

Իշխանի տաճարը երկար ժամանակ եղաւ աթոռ վրաց հայսկոպոսի, որ կրում էր «Իշխանի» տիտղոսը և որը վրաց հովուապետների դասում կաթուղիկոսից յետոյ 9-րդ տեղն էր գրաւում, անմիջապէս Նինոցմինդի հովուապետից յետոյ (Θ. Жорданія, Хроника, на груз. яз кн. I, Тиф. 1893 թ. հր. 46): Դատելով մի հին փաս-

* Ներսէս Գ. Է. Թ.

տից որ հրատարակել է Դ. Баградзе (Археологическое путешествие по Грузин и Адчарѣ, II-гг 1878 г. стр. 81) նրա իրաւասութեան ենթարկում էին. Գուրջի-Բողազի * այս կողմը — ամբողջ Թորթումը, Տայքից ներքեւ, Արտանուջ-Սակրուլավի վերին մասի այս կողմը. դէպի մեզ այսինքն դէպի վրաստան դարձած Օրջոխեան լեռների բոլոր լանջերը, այն կողմը (Ճորոխ գետի) և վերջապէս՝ բոլոր Սակավկասիձօն, Սպեր ու Տրապիզոն շղթայի այս կողմը»։

Ինքն տաճարը, ինչպէս հաղորդում է կապիտան Վ... խաչաձև է, չորս սիւներով, պսակուած բաւական նուրբ գմբէթով, որ բաղկացած է թմբուկից և կոնաձև ծածկից, կերտուած է քարով. երկարութիւնը մօտաւորապէս 46, իսկ լայնութիւնը 26 քայլ է։ Եկեղեցու շէնքը մի քանի տեղերում պատուածքների ունի, բայց գմբէթը բոլորովին անմնաս է։ Սակայն, նոյն Վ... կապիտանի ասելով, տաճարի մի մասը, այսինքն, աղօթողների մասը այժմ անջատուած է միւս մասից քարեայ միջնորմով և յարմարեցրած է մզկիթի, իսկ գմբէթի խաչը վերցուած։

Իշխանի տաճարը միշտ սքանչացրել է տեսնողներին իւր անսովոր գեղեցկութեամբ և նրբութեամբ։ Նոյն իսկ Ժէ. դարի ճանապարհորդ Յակովբ Կարնեցին (տես հրատ. Կ. Կոստանեանց, Վաղարշապատ. 1903 թ. եր. 17) հիացած տաճարով, նրան մըրցակից միայն Կ. Պօլսի Ս. Սոփիան էր համարում։ Բացի այս, ներքուստ պատած լինելով հիանալի քանդակաւոր պատկերներով, Օշկայի և Սախուլի հարեան ոչ պակաս փառաւոր տաճարների հետ թուրք բնակիչների մէջ առաջ բերեց հետևեալ առածը. «Փառաւոր են Օշկայի տաճարի գեղեցկութիւնը, Սախուլի տեղադրութիւնը և Իշխանի նկարները» (Н. Я. Маррѣ. цит. изд. стр. XXXV)։

Արտաքուստ տաճարի և գաւթի պատերի վերայ պահպանուած են վրաց եկեղեցական գլխադրերով մի քանի արձանագրութիւններ. և մի բեկոր՝ հայերէն։ Այս արձանագրութիւնները իւր փառանակին արտահանել է ստուարաթղթով (эстампажъ) Մխիթարեան հ. ներսէս Սարգսեանը և հաղորդել ակադեմիկ Մ. Բրոսսէին, որը և հրատարակել է պատշաճ բացատրութիւններով 1864 թ. VII շարք. «Mémoires de l'Académie Imperiale des Sciencis» (т. VIII, № 10, стр. 14—20, и табл. III и IV, тамъ же)։ Նրանք XI—XIII դարերի են)։

բարդ. Յ. Ա. Ե.

* Լեւանեցի Զ. Թ.